




Պատ. 4. — Եղիվարդի եռաշարե եկեղեցին մուտքի կիսակործան սանդուղները: Պատկերին վերայ, ձախին, մուտքի դրան առջև կը նշմարուին սանդուղի երկու աստիճանաշարքերուն մնացորդները:

մը վրայ կառուցանելու, եւ ուր բարձրանալու համար հայաչէն սանդուղներ կը դործածէին: Նման շինութիւններէ օրինակ մը կրնանք տեսնել Գառնիի տաճարին եւ կամ Տեկորի նախաքրիստոնէական տաճարին վրայ:

Հելլեն-հռոմէական շինութեան մը պարագային, սանդուղները կը դրուէին շէնքին մուտքին դիմաց եւ աստիճաններու թիւը պէտք էր ըլլար միշտ անդոյգ, որ-

պէտք էր ոտքով որ սանդուղը բարձրանալ սկսէին, այն ոտքով սանդուղը վերջացնէին: Այսպէս՝ 5, 7, 9 աստիճաննոց հարթակներու բազմաթիւ օրինակներ ունինք մեր առջև: Գառնիի մէջ՝ ինը աստիճանէ կը բաղկանայ հարթակին սանդուղը, Տեկորին ալ՝ որ ամբողջ շէնքը կը շրջապատէ՝ ունեցած է ինը աստիճաններ: Անիի Ս. Աստուածածինը ունի հինգ աստիճաններ, եւ այլն:

Հայկական ճարտարապետութեան մէջ հարթակը կը տարբերի հռոմէական դրութենէն եւ աւելի կը մօտենայ Հելլենականին, որ շէնքին շուրջ կը շարէ աստիճանները: Այսինքն թէ՛ հարթակը ամէն կողմէն աստիճանաբար կը բարձրանայ: Այս ձեւ կառուցումը, որ հեթանոսական շրջանի շինութեան մըն է, մնացած է մեր մէջ՝ քրիստոնէական շէնքին ալ, ուր շէնքերը միշտ բարձրադիր դերքի վրայ շինուած են, հարթակին շուրջիւ: Արդէն հայկական շէնքը ճարտարապետական անակ կարգադրութիւն մը ունի՝ որ ան չի կրնար ուրիշ շէնքի մը կցուած շինուիլ: Հայկական եկեղեցին, որպէս ճարտարապետական ամբողջութիւն մը, հրապարակի մը մէջտեղը՝ հոյաչէն (monumental) շինուելիք շէնք մըն է: Այս պարագային մասնաւորաբար նկատողութեանը կը յանձնեմ բոլոր անոնց, որոնք արտասահմանի մէջ կը մտածեն հայկական ոճով եկեղեցիներ շինելու: Եւ ճիշտ ասոր համար էր որ Նիւ Եորքի Մայր Եկեղեցիին համար ներկայացուցած նախաձեռնութիւն մէջ շէնքը դրած էր բարձր պատուանդանի մը վերայ, որ այդ պարագային կը ձեւաւորէր պահանջուած auditorium-ը եկեղեցիին տակը:

(Շարունակելի)

Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

ԱՆԴԱՄ ՁՈՒԻՑԵՐԻՈՅ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏՆԵՐՈՒ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԼԻԿԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

ՎԵՀ. Տ. Տ. ԶԱՐԵՀ ՓԱՅԱՍԼԵԱՆ

Վերջին պահուն, մինչ մամուլին կը յանձնէինք «Բագմավէպ»ի պրակները, հասան Մերձաւոր Արեւելիի քերթերը, որոնք մեծատառ կ'արձանագրէին Անթիլիասի Կաթողիկոսական ընտրութիւնը:

Ողբ. Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսի մահէն երեւոյկէս տարի վերջ՝ ահա՛ կը վերնայ սուգի ֆողը Անթիլիասի Կաթողիկոսական Աթոռին, ու յետ երկարատեւ տարակարծութիւններու, Փետր. 20ի ընտրական ժողովին մէջ՝ գահ կը բարձրանայ Գերշ. Զարեհ Սրբազան, Հայկ. Առաջնորդը:

Նորընտիր Կաթողիկոսը, աւագանի անուումով՝ Սիմոն Փայասլեան, ծնած է Մարաշ, 1915ի Փետր. 14ին: Ընտանիքով հաստատուած է Հայկ., 1922ին: Յանախած է տեղւոյն Մեսրոպեան վարժարանը. իսկ 1929ին աւարտած է Հայկական վարժարանը: 1929-30 հետեւած է Յիսուսեան Հայրերու «Ս. Վարդան» վարժարանի դասընթացներուն: 1930ին մտած է Անթիլիասի նորաբաց դպրեւանքը, ուր արեղայ ձեռնադրուած է՝ պատրաստական հնգամեայ փայլուն շրջանէ մը վերջ: Իսկոյն վարած է ուսուցչական պաշտօններ՝ վանքի շրջանակէն ներս, միաժամանակ պատրաստելով վարդապետական աւարտաճառ մը՝ Ոսկերեքանի Մատթէի Մեկնութեան շուրջ: 1936-38 հետեւած է Պրիւսէի մէջ համալսարանի արեւելագիտութեան եւ պատմութեան ճիւղերուն: 1939ին նշանակուած է Հայկ. Արք. Փոխանորդ. իսկ 1947ին՝ Առաջնորդ նոյն քեմին, Եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ընդունելով Վեհ. Գարեգին Կաթողիկոսէն:

Երկարամեայ Առաջնորդական պաշտօնը զուգադիպած է ներքին ու արտաքին դժուարութիւններու. պատերազմ, Սիւրիոյ ազատագրական պայքար, հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան դասաւանդման մասին՝ պետական սեղմումներ. ու բոլորին մէջէն՝ Նա յաջողած է առաջնորդել իր ժողովուրդը ձեռնհասօրէն:

Վարձատրուած է Սուրիական Աթոռի Կաթ. շխնշանով:

Զերմագին շնորհաւորութիւններու հետ, կը սիրեմք յուսալ որ նորընտիր Գահակալը Անթիլիասի՝ նոյնքան ձեռնհասութեամբ հովուէ իր խնամքին յանձնուած նոր հօտը, խաղաղ ու հաշտ մթնոլորտի մը մէջ:

ԽՄԲ.